# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 8
## 22.11.2022Թ. ԿՆՔՎԱԾ N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «30» հունիսի 2026թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր Ա. Մանուկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) և մի կողմից «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1910-Ն որոշումը, մասնագիտական խմբի 15.06.2026թ. արձանագրությունը /առաջարկը/ և 22.11.2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված.

ա) ՀՀ Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման համար 13,935,000 ՀՀ դրամը կվճարվի համալիր փորձաքննության եզրակացությունները ստանալուց հետո՝ համաձայն պայմանագրի Հավելված 1-ի 5-րդ և 6-րդ կետերի:

1.2 Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված վճարման ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրը գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011038610
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

______________ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն

______________ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«22» նոյեմբերի 2022թ.
N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի
«30» նոյեմբերի 2026թ.
կնքված Համաձայնագիր 8-ի

««22» նոյեմբերի 2022թ. կնքված N ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն գնման պայմանագրի Հավելված 2-ի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**2026թ.**

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | |
| | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71241200/3 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում – ՀՀ Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման | 13,935,000 | 13,935,000 | 13,935,000 | 13,935,000 | 13,935,000 | 13,935,000 | 13,935,000 | **13,935,000** |
| | | - ՀՀ Գեղարքունիքի մարզում Արգիճի ջրամբարի կառուցման | | | | | | | | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով»*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011038610
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Մոդուլ» ՍՊԸ
Ք. Երևան, Ն.Զարյան 22, տարածք 3
էլ. հասցե info@modul.am
«ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
հեռ. 011201511
Տնօրեն

Ն. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.